

Ինչպես օգտվել պլաստիկ քարտից

Դառնալով 'ՎՏԲ-Հայաստան Բանկ' ՓԲԸ-ի հաճախորդը և ստանալով միջազգային պլաստիկ քարտ՝ Դուք կարող եք ամբողջությամբ օգտվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ վճարումների միջազգային համակարգից՝ աշխարհի ցանկացած երկրում:

'ՎՏԲ-Հայաստան Բանկ' ՓԲԸ-ի միջազգային պլաստիկ քարտով Դուք կարող եք՝

- առանց միջնորդավճարի գանձման վճարել ցանկացած ապրանքի դիմաց խանութներում, սրահներում և սուպերմարկետներում, վճարել ծառայությունների դիմաց հյուրանոցներում, ռեստորաններում, տուրիստական ընկերություններում, սպասարկման կենտրոններում՝ առանց օգտվելու կանխիկ դրամական միջոցներից,
- օպերատիվ կերպով ստանալ կանխիկ գումար.
Ձեր տրամադրության տակ է կանխիկի տրամադրման բանկային կետերի և շուրջօրյա աշխատող բանկոմատների գլոբալ ցանցը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում,
նախօրոք համար պատվիրել հյուրանոցում կամ մեքենա վարձել ավտոտրանսպորտի վարձույթի կետերում. բավական է զանգահարել հյուրանոց կամ ավտոտրանսպորտի վարձույթով զբաղվող ընկերություն, որից հետո քարտի հաշվի վրա տեղի է ունենում հաստատված գումարի արգելափակում, որի փոխանցումը հյուրանոցի կամ ընկերության հաշվին կատարվում է միայն տեղում՝ ծառայության դիմաց վճարելիս,
- ապահովել Ձեզ կորուստներից.
պլաստիկ քարտերը ապահով պաշտպանված են կեղծումներից, իսկ քարտային հաշիվը՝ անթույլատրելի մուտքերից: Դուք կարող եք խոշոր գումաներ կատարել՝ Ձեզ մոտ չունենալով զգալի քանակությամբ կանխիկ դրամ: Ժամանակին տեղեկացնելով Բանկին քարտի կորստի կամ առևանգման մասին Դուք կարող եք վստահ լինել Ձեր միջոցների պահպանման համար,
- արտասահման մեկնելիս չհայտարարագրել պլաստիկ քարտի հաշվի վրա գտնվող միջոցները, այսինքն վերանում են արտահանվող գումարի սահմանաչափի հետ կապված բոլոր հարցերը,
- ունենալ 'ընտանեկան' հաշիվ.
Դուք կարող եք Ձեր ընտանիքի անդամների համար ձևակերպել մեկ կամ մի քանի լրացուցիչ պլաստիկ քարտ

Ինչպես վճարել պլաստիկ քարտով

Դուք կարող եք Ձեր պլաստիկ քարտով վճարումներ կատարել ցանկացած ապրանքի և ծառայության դիմաց ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Բոլոր խանութներում, սուպերմարկետներում, ռեստորաններում և առևտրային ու սպասարկման ոլորտի կետերում, որտեղ դուք կտեսնեք VISA միջազգային վճարային համակարգի լոգոտիպը, որը համընկնում է Ձեր պլաստիկ քարտի դիմային մասում գտնվող լոգոտիպի հետ, Դուք կարող եք ներկայացնել Ձեր քարտը վճարման համար:

Հիշեցնենք Ձեզ, որ ամբողջ աշխարհով մեկ ապրանքների և ծառայությունների դիմաց պլաստիկ քարտով վճարային գործարքներ իրականացնելիս միջնորդավճարներ չեն գանձվում:

Եթե Ձեր քարտային հաշիվը սպասարկվում է դրամով, ապա Դուք նույնպես կարող եք Ձեր պլաստիկ քարտի օգնությամբ վճարել գումաների դիմաց ամբողջ աշխարհով մեկ:

Պլաստիկ քարտերում արտարժույթի փոխարկումն իրականացվում է VISA միջազգային վճարային համակարգի փոխարժեքներով:

Վճարումն իրականացնելու համար Ձեզ անհրաժեշտ է միայն ներկայացնել Ձեր պլաստիկ քարտը վաճառողին կամ գանձապահին՝ հավաստագրման գործընթացի համար: Հավաստագրման անցկացումից հետո Դուք պետք է ստորագրեք գանձապահի կողմից ներկայացված անդորագրի վրա՝ ստորագրությունը պետք է համընկնի պլաստիկ քարտի հետևի մասի Ձեր ստորագրության օրինակի հետ:

Ապրանքների և ծառայությունների դիմաց վճարային գործարքներ իրականացնելիս՝ Ձեզ կարող են խնդրել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ: Խնդրում ենք, Ձեզ մոտ ունենալ քաղաքացիական կամ արտասահմանյան անձնագիր:

Պլաստիկ քարտերի օգնությամբ ապրանքների և ծառայությունների դիմաց վճարային գործարքներն անպայման պետք է կատարվեն Ձեր ներկայությամբ: Խնդրում ենք չտալ Ձեր պլաստիկ քարտը վաճառողին կամ գանձապահին, եթե Դուք ներկա չեք հավաստագրման գործընթացին (վճարումն իրականացնելու համար պլաստիկ քարտի անցկացումը իմպրինտերի կամ էլեկտրոնային տերմինալի միջոցով): Այն դեպքում, երբ վճարումը չի հաջողվում իրականացնել (հավաստագրման մերժման դեպքում), անպայման պահանջեք Ձեր ներկայությամբ ոչնչացնել անդորագիրը:

Որտեղ կարելի է կանխիկ գումար ստանալ

Մասնաճյուղերում, որոնք տեղակայված են Երևանում և Հայաստանի այլ շրջաններում: ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի կանխիկի տրամադրման կետերի լրիվ ցանկը կղրվի ծրարի մեջ Ձեր պլաստիկ քարտի հետ միասին:

Բանկոմատներում և հայկական ու արտասահմանյան շատ բանկերի կանխիկի տրամադրման կետերում: Պլաստիկ քարտերով կանխիկի տրամադրման բանկային կետերի և բանկոմատների համար կողմնորոշիչ կարող է հանդիսանալ մուտքի մոտ կամ հաճախորդների համար այլ հասանելի վայրերում պատկերված VISA միջազգային վճարային համակարգի լոգոտիպը, որը համընկնում է Ձեր պլաստիկ քարտի դիմային մասում գտնվող լոգոտիպի հետ:

Բանկոմատներում կանխիկի ստացման համար Ձեզ անհրաժեշտ է միայն Ձեր PIN-կոդը, իսկ կանխիկի տրամադրման մյուս կետերում՝ անձը հաստատող փաստաթուղթ (քաղաքացիական կամ արտասահմանյան անձնագիր):

Ինչպես կարելի է համալրել պլաստիկ քարտի հաշիվները

- կանխիկ դրամով՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի մասնաճյուղերում և Գլխավոր գրասենյակում,
- անկանխիկ փոխանցումով՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի ցանկացած մասնաճյուղից, ինչպես նաև այլ հայկական և արտասահմանյան առևտրային բանկերից:

Ձեր քարտային հաշվի վրա դրամական միջոցների փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման ժամանակ անհրաժեշտ է ճիշտ լրացվել նշված ռեկվիզիտները՝

- քարտատիրոջ անուն, ազգանուն, հայրանունը,
- 16 նիշից բաղկացած քարտի համարը,
- Ձեր քարտային հաշվի տարադրամով (դրամ, եվրո կամ ԱՄՆ դոլլար) վճարվող գումարի չափը,
- ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի վճարային ռեկվիզիտները,
- 12 նիշից բաղկացած քարտային հաշվի համարը

Ձեր քարտային հաշվի միջոցների պահպանման նպատակով խնդրում ենք Ձեզ անվերապահորեն պահպանել հետևյալ կանոնները՝

- PIN-կոդը պահել քարտից առանձին, ոչ ոքի մի հայտնեք Ձեր PIN-կոդը: Դրա կորստի դեպքում քարտի նոր PIN-կոդ չի տրվում, այլ պլաստիկ քարտը ստիպված կլինեն վերաթողարկել:
- PIN-կոդը մուտքագրեք այնպես, որ Ձեր մուտքագրած թվերը կողքից տեսանելի չլինեն:
- Մի տվեք քարտը այլ անձանց, բացառությամբ գանձապահի՝ քարտը որպես ապրանքների և ծառայությունների վճարման միջոց օգտագործելու կամ կանխիկ դրամ ստանալու ժամանակ:
- Պահանջեք, որպեսզի քարտով գործարքներն իրականացվեն անպայման Ձեր ներկայությամբ:
- Քարտը պահեք անվտանգ տեղում: Մի թողեք քարտը այն վայրերում, որտեղ կողմնակի անձիք կարող են պատճենահանել քարտի համարը և Ձեր ստորագրության նմուշը:
- Գանձապահի կողմից քարտի ձայնային հավաստագրում իրականացնելիս գանձապահը պետք է ձևակերպի միայն մեկ անդորագիր (իմպրինտերում օգտագործվող հատուկ գանձապահական չեկ): Եթե անհրաժեշտություն է առաջացել ձևակերպելու երկրորդ անդորրագիրը, օրինակ՝ երբ առաջինի վրա վատ են տպվել թվերը և տառերը կամ գանձապահը սխալվել է անդորրագիրը ձևակերպելիս, ապա նախորդ անդորրագիրը պետք է Ձեր ներկայությամբ պատովի կամ ջնջվի:
- Քարտով գործարք իրականացնելու պահից սկսած երեք ամսվա ընթացքում պահպանեք Ձեզ տրված անդորրագրերի օրինակները, որտեղ առկա է Ձեր ստորագրությունը:
- Քարտի մագնիսական ժապավենի վնասվելուց խուսափելու համար քարտը մի պահեք անմիջապես էլեկտրոնագնիսական ճառագայթման աղբյուրներին մոտ (էկրաններ, հեռուստացույցներ, աուդիո-վիդեո սարքավորումներ և այլն): Ձգույշ եղեք խանութներում վճարումներ կատարելիս, որտեղ օգտագործվում է ապրանքների մագնիսական կոդավորում, դա կարող է բերել բանկոմատներում և էլեկտրոնային գանձապահական տերմինալներում քարտի ոչ ճիշտ մշակման:
- Չի կարելի քարտը պահել ջերմային աղբյուրներին մոտ, ինչպես նաև ենթարկել այն ուղիղ արեգակնային ճառագայթումների ազդեցության:
- Խնդրում ենք Ձեզ հիշել, որ բանկոմատից կանխիկ դրամ ստանալիս երեք անգամ անընդմեջ սխալ PIN-կոդ մուտքագրելու դեպքում Ձեր պլաստիկ քարտը կարգելափակվի: Եթե արգելափակումը ամեն դեպքում տեղի է ունեցել, ապա դուք պետք է զանգահարեք՝ ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի Պրոցեսինգային կենտրոն (+10) 56-07-08 հեռախոսահամարով կամ այլցելեք ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի ցանկացած մասնաճյուղ:

Ինչ անել քարտի առգրավման դեպքում

Բանկի հաստատություններում կամ առևտրային կետերում քարտի առգրավման դեպքում անպայման պահանջեք, որպեսզի կազմվի համապատասխան արձանագրություն, որտեղ պետք է նշված լինի ամսաթիվը, քարտի առգրավման ժամն ու տեղը, ինչպես նաև անպայման պահանջեք, որպեսզի արձանագրության վրա լինի քարտն առգրավող գանձապահի կամ կառավարչի ստորագրությունը: Որից հետո անպայման զանգահարեք ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի Պրոցեսինգային կենտրոն (+10) 56-07-08 հեռախոսահամարով:

Ինչ անել քարտի կորստի դեպքում

Ձեր պլաստիկ քարտի կորստի կամ գողացման դեպքում անհապաղ զանգահարեք ՎՏԲ-Հայաստան Բանկ՝ ՓԲԸ-ի Պրոցեսինգային կենտրոն (+10) 56-07-08 հեռախոսահամարով և գործեք համաձայն ստացվող ցուցումների: Քարտի կորստի մասին քարտը տրամադրող բանկին

անհապաղ չտեղեկացնելը կարող է բերել Ձեր պլաստիկ քարտով անթույլատրելի գործարքների իրականացմանը: Ինչպես նաև, հնարավորության դեպքում, դիմեք տեղի իրավապահ մարմիններին՝ հայտնելով պատահարի մանրամասները:

Ինչպես արգելափակել քարտը

Քարտի կորստի կամ գողացման դեպքում քարտը անմիջապես արգելափակելու համար Ձեզ անհրաժեշտ է զանգահարել ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ-ի Պրոցեսինգային կենտրոն (+10) 56-07-08 հեռախոսահամարով: Հարկավոր է հիշել, որ հենց Դուք եք պատասխանատվություն կրում Ձեր պլաստիկ քարտով կատարված բոլոր գործարքների համար, որոնք կատարվում են մինչև դրա գործողության ժամկետի ավարտը կամ քարտի սպասարկումը դադարեցնելու անհրաժեշտության մասին բանկին տրված Ձեր գրավոր ծանուցման օրվանից սկսած 96 ժամվա ընթացքում:

Բանավոր կամ գրավոր տեսքով պլաստիկ քարտի կորստի մասին տվյալների փոխանցման ժամանակ խստորեն արգելվում է նշել Ձեր PIN-կոդը: